«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանեկան հոգեբանություն, կոնֆլիկտներ

Հարցը՝ Ինչ ազդեցություն է ունենում ընտանեկան կոնֆլիկտները սովորողների դաստիարակության վրա

Կատարող՝ Լուսինե Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝

Ն.Վ. Գոգոլի անվան թիվ 35 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 2
ԳԼՈՒԽ1. Ընտանիքի հարաբերությունների սահմանման հոգեբանական իրավիճակներ 5
ԳԼՈՒԽ 2. Ընտանեկան կոնֆլիկտներ 8
ԳԼՈՒԽ 3. Կոնֆլիկտների մեխանիզմը 13
Եզրակացություն 15
Գրականության ցանկ 18

Ներածություն

Ընտանիքը հասարակության բջիջն է, քաղաքակրության ստեղծած ամենամեծ արժեքներից մեկը: Այն կատարում է հասա¬րակության, որպես մեկ ամբողջության նրա կայունության ու բնականոն կեն-սա¬գործունեության պահպանման կարևորագույն գործառույթ: Ահա թե ինչու ընտանիքը ոչ միայն զուտ անձնային արժեք է յուրաքանչյուր մարդու համար, այլև մեծագույն արժեք հասարակության համար: Այդ է պատճառը, որ կայուն և հոգեպես առողջ ընտանիքի գոյությունն ապահովելը պետական կարևորություն ունեցող գործ է:

Հասարակության մեջ ընտանիքն իր ուժով անհամեմատելի դեր է կատարում մյուս սոցիալական ինստիտուտների համեմատությամբ, քանի որ հենց ընտանիքում է ձևավորվում և զարգանում մարդը (անձնավորությունը): Ընտանիքն է փոխանցում սոցիալական արժեքները, այլ կերպ ասած, այն հասարակության նյութական և հոգևոր արժեքներ փոխանցող կարևորագույն օղակն է: Ակնհայտ է, որ ընտանիքում և ընտանիքի միջոցով է անձը յուրացնում սոցիալական նորմերը, արժեքները և գիտելիքները, ձևավորվում են նրա բնավորության գծերը, մարդկանց հետ շփվելու կարողությունները, ինչպես նաև ձեռք են բերվում և յուրացվում սոցիալական այն դերերը, որոնք անհրաժեշտ են մարդու ճիշտ ադապտացիայի համար: Ընտանիքը օգնում է ոչ միայն անձի ձևավորմանն ու զարգացմանը, ինքնահաստատմանը, գործընթացին, օգնում է դիմակայել կյանքի դժվարություններին, ճիշտ կողմնորոշվել դժվարին իրավիճակներում, ձևավորում է մարդու սոցիալմշակութային ակտիվությունը, զարգացնում է մտավոր հնարավորությունները:

Ընտանիքը սոցիալ-մշակութային ֆենոմեն է, որը մարդու համար կարևոր օղակ է հանդիսանում հասարակական կյանքին նախապատրաստվելու համար: Այն առաջնային դաստիարակչական ինստիտուտն է, որի հետ կապը մարդը զգում է իր ողջ կյանքի ընթաց¬քում:

Այսօր հասարակությունն ապրում է սոցիալմշակութային նոր ժամանակաշրջան, որն իր ազդեցությունն է թողնում սոցիալական բոլոր ոլրտների, այդ թվում նաև ընտանիքի վրա:

Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ ներկայումս կրում է էական փոփոխություններ: Շատ գիտնականներ այն համարում են ճգնաժամային իրավիճակ ընտանիքի համար: Եռաստիճան ընտանիքից անցում կատարվեց ավելի քիչ անդամներ ունեցող ընտանիքի, որը հիմնականում կազմված է ծնողներից և նրանց զավակներից (նուկլեար ընտանիք):

Սկսում են թուլանալ ավանդական ընտանիքի գործառույթները, տեղի են ունենում դերային փոփոխություններ: Կինը ձեռք է բերում ավելի շատ ինքնուրույնություն, որն էլ իր արտացոլումն է գտնում ընտանիքում:

Այսօր առկա են որոշակի բացասական գործոններ, որոնք ազդում են երեխայի սոցիալականացման վրա: Դրանք են՝ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, որն էլ իր հերթին բերում է գործազրկության թվի մեծ աճ, անապահով ընտանիքներ, արտագնա աշխատանքի պատճառով ձևավորված ՝հեռակա ընտանիքներ՝, ինչպես նաև ոչ ճիշտ հոգևոր և բարոյական արժեքների յուրացում, որում իր մեծ մասնաբաժինն ունի զանգվածային լրատվական միջոցները, համացանցը:

Ահա ինչու է կարևոր ուսումնասիրել, թե ժամանակակից հայ ընտանիքում տեղի ունեցող այս միտումները ինչպես են ազդում երեխայի սոցիալականացման վրա և որքանով են ծնողներն այսօր նպաստում դրա արդյունավետ իրականացմանը:

Ժամանակակից հասարակության մեջ գաղափարախոսական, տնտեսական նպատակների, հետևաբար նաև սոցիալական և մշակութային ուղենիշների աղճատումը կամ բացակայությունը առաջացնում են ապակողմնորոշում ընտանիքի նպատակներում: Այս ամենը տեղի է ունենում նոր մշակութային արժեքների ներխուժման, կյանքի տեմպերի արագացման, ընտանիքի ավանդական կառուցվածքի քայքայման ֆոնի վրա:

ԳԼՈՒԽ1. **Ընտանիքի հարաբերությունների սահմանման հոգեբանական իրավիճակներ**

Ընտանիքն անհատի սոցիալականացման կարևորագույն ինստիտուտներից է: Հենց ընտանիքում է մարդը ստանում սոցիալական շփումների առաջին փորձը: Իսկ որոշակի ժամանակահատված այն ընդհանրապես դառնում է միակ միջավայրը նման փորձ ձեռք բերելու համար: Հետագայում, որպես նոր սոցիալական ինստիտուտներ, երեխայի կյանքում հանդես են գալիս մանկապարտեզը, բակը, դպրոցը: Բայց միևնույն է, անգամ այդ ժամանակ ընտանիքը շարունակում է մնալ կարևորագույն ինստիտուտը:

Ընտանիքը կարելի է դիտարկել որպես հիմնարար մոդել և ձև՝ անհատի զարգացման գործում: Այստեղ են ձևավորվում մարդու բարոյական արժեհամակարգը, վարվեցողության, մարդկանց հետ շփվելու նորմերը: Երեխան ընտանիքից է վերցնում լավ և վատ օրինակները, այսինքն այն ամենը, ինչ բնորոշ է իր ընտանիքին: Եվ պատահական չէ, որ, մեծանալով, մարդիկ հաճախ կրկնում են այն ամենը, ինչ կար, կամ տեսել էին իրենց ծնողների ընտանիքում:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսեւորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցող տնտեսական փոփոխությունները մեծ ազդեցություն են ունեցել ինչպես հասարակության բոլոր ոլորտների վրա, այնպես էլ ընտանիքի հոգեբանական, փոխհարաբերությունների և դաստիրակության վրա:

Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ ոչ միայն ապահովում է հասարակության կայունությունը, այլև զարգանում է դրա հետ, հարմարվում նորարարություններին և փոփոխություններին: Մյուս կողմից, ընտանիքը հանդես է գալիս որպես անհատի առաջնային սոցիալական հարմարվողականության միջայր

Ընտանիքը մարդասիրության, հասկացողության, կարեկցանքի դպրոց է: Միևնույն ժամանակ, ինտենսիվ, սերտ փոխազդեցության նման համակարգում վեճերը չեն կարող չծագել, չեն կարող չլինել հակամարտություններ և ճգնաժամեր: Անհատի և ընտանիքի միջև հակասություններն անխուսափելի են:

Երբ նման հակասություններ են ծագում ընտանիքում, մարդը կանգնում է դրանց լուծման ուղու ընտրության առջև:

Ընտանեկան հարաբերությունների բնույթը կախված է բազմաթիվ գործոններից: Սա ընտանիքի սոցիալական դիրքն է, դրա կազմը և կյանքի ցիկլը, ընտանիքի անդամների տարիքը, նրանց հուզականության աստիճանը, ինտելեկտի մակարդակը և ունակությունը բաց հաղորդակցության:

Նյութական և տնտեսական գործոնը հատուկ ազդեցություն ունի ընտանեկան հարաբերությունների վիճակի վրա: Ընտանիքների մեծ մասի ֆինանսական վիճակի վատթարացում, անդամների սոցիալական կարգավիճակի փոփոխություն, հասարակության արժեքների հիերարխիայի փոփոխություններ և անհատականությունը և շատ այլ պատճառներ հանգեցնում են ընտանեկան կյանքից

գոհունակության մակարդակի նվազման, հետևաբար՝ ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակների դրսևորմամբ: Ամուսնությունը և ընտանեկան հարաբերությունները արտացոլում են ընտանիքի անդամների և՛ դրական, և բացասական կողմերը:

ԳԼՈՒԽ 2. Ընտանեկան կոնֆլիկտներ

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների չորս տեսակ.

1.Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը:

2.Միջանձնային- կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հարաբերությունների լուծման ընթացքում: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3.Անհատական- խմբային կոնֆլիկտն առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4.Միջխմբային կոնֆլիկտ- այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև:

Կոնֆլիկտածին գործունեության հիմքերում ընկած են՝

ա) գործունեության բնույթը, օրինակ՝ հարձակվողական, պաշտպանողական, չեզոք

բ) ակտիվության կորուստ, օրինակ՝ կապվածություն, կոպտություն, խանդ, կյանքին տարբեր հայացքներով նայել և այլն

գ) ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում):

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է ապրել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական հոգսերը, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, ֆինանսին, բարեկամներին, հարազատներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի ադամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա են պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ՝ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1.սեփական «ես»-ի նշանակության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքից,

2.դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի, փոխըմբռնման բացակայության և այլն,

3.ցածր կրթամակարդակ,

4.աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ,

5.կախվածություն ծնողների ընտանիքներից:

Առանձնացվում է նաև ժամանակաշրջաններ և գործոններ, որոնք ազդում են ամուսնական հարաբերությունների կոնֆլիկտայնության վրա: Դրանք են ընտանիքի զարգացմա ճգնաժամային շրջանները կամ փուլերը:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. **Միմյանց հարմարելու փուլ**- ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ,
2. **Երեխա ունենալու փուլ**- երեխայի ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը, կնոջ հոգնածության պատճառով կապված երեխայի հետ,
3. **Բախման փուլ**- երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը,
4. **Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ**- այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ կամ քաղցի շրջան,
5. **Իվոլյուցիոն կամ միայնակության զգացման փուլ**- այս շրջանը համարվում է 18-24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է իվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութաան վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնլու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Գործոնները, որոնք ընտանիքում հանգեցնում են կոնֆլիկտի, թերի կլինեին, եթե հաշվի չառնվեր մակրոգործոնները, այսինքն՝ ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

Կապված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից, առանձնացվում են՝ ճգնաժամային, կոնֆլիկտային, պրոբլեմային և նևրոտիկ ընտանիքներ:

Ճգնաժամային ընտանիք– հետաքրքրությունների և պահանջմունքերի հակադրությունները կրում են սուր բնույթ և ներառում են ընտանիքի կենսագործունեության կարևոր ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ են հանդիսանում: Ամուսինները լինում են անհանդուրժողական, աններողամիտ և նույնիսկ մեկը մյուսի հանդեպ ունենում է թշնամություն և չեն համաձայնում ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են կամ գտնվում են փլուզման եզրին:

Կոնֆլիկտային ընտանիք- ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են, առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների և կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

Պրոբլեմային ընտանիք- սրան բնորոշ են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են, առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել

ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների և կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

Նևրոտիկ ընտանիք- այստեղ հիմնական դերը խաղում են այլ գործեննորի կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորում, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի և ակնհայտ ձևերով: Ցուցադրական-դեմոնստրատիվ լռելը, կտրուկ շարժումը (ժեստ), անհամաձայնություն նշանակող հայացքը, հարաբերություններում ընդգծված, շեշտված սառնությունը և բացահայտ խոսակցությունը տարբեր ձևերով և դրսևորումներով:

ԳԼՈՒԽ 3. Կոնֆլիկտների մեխանիզմը

Վերջին տասնամյակի սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական գրականության մեջ մեծ ուշադրություն է հատկացվում ընտանեկան հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ձևավորման հարցին: Չնայած նրան, որ ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վերաբերյալ սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական բազմաթիվ լուրջ հետազոտություններ են կատարվել, սակայն դեռևս ընդհանուր մեթոդաբանական հայեցակետ չի մշակվել, «հոգեբանական մթնոլորտ» հասկացությունը միասնական կիրառություն չի ստացել և տարբեր ուսումնասիրողներ տարբեր կերպ են մեկնաբանում այն: Հոգեբանական մթնոլորտ հասկացությունն առաջինը օգտագործել է Ն. Մանսուրովը, ում կարծքիով հոգեբանական մթնոլորտը դա կոլեկտիվի անդամների մտերմությունն է, համակրանքը, բնավորությունների, հետաքրքրությունների համատեղելիությունը:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների երեք համակարգ.

1. **Էգոցենտրիկ համակարգ**- որի հիմքում ընկած է սեփական «Ես»-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես օգտակար գործիք կամ խոչընդոտ,
2. **Այլետորոցենտրիկ համակարգ**- որի հիմքում ընկած է ուրիշը,
3. **Սոցիոցենտրիկ համակարգ**- հիմքում ընկած է մեկ անձ:

Գոյություն ունեն ամուսինների միջև ներանձնային հակասությունների առանձնահատկություններ՝ կապված սեռի և դերի առանձնահատկության և գենդերային կարծրատիպերի բովանդակության հետ: Զգացմունքային առումով,

տղամարդկանց համար ներանձնային հակասություններից ամենանշանակալիցը ընտանեկան բարեկեցությունն է:

Ի տարբերություն Ռեբուսիև Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով:
Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Եզրակացություն

Թվում է՝ երեխաների համար ամենաանվտանգ տեղը սեփական տունն ու ընտանիքն է, սակայն փաստերը հաճախ այլ բան են վկայում. ընտանիքը կարող է նաև դառնալ այն վայրը, որտեղ երեխան դառնում է մեծահասակների ագրեսիվ վարքագծի զոհ կամ ականատես: Իսկ ընտանեկան անբարենպաստ պայմաններն իրենց ազդեցությունն են ունեունում անձի սոցիալականացման գործընթացում: Ընտանիքը երեխայի առաջին սոցիալականացման ինստիտուտն է, որն ապահովում է մարդու՝ որպես հասարակության լիարժեք անդամի կայացմանը, և նրա մոտ ձևավորում է աշխարհայացք, բարոյական չափանիշներ: Սակայն ցավոք պետք է արձանագրենք, որ այդ նկարագիրը ենթարկվում է այլ փոխումների, և մենք ունենում ենք մուրացիկ, թափառաշրջիկ, ծնողական խնամքից դուրս մնացած, զանցագործ և հանցագործ երեխաներ, պատանիներ ու երիտասարդներ: Ունենք հետազոտությունների արդյունքներ, որոնց ցուցանիշները ներկայացնում ենք՝ կանաց 6 %-ը մանուկ հասակում ականատես է եղել իր մոր նկատմամբ ֆիզիկական բռնության, 7.9 %-ը լսել է դրա մասին, 9.2 %-ը երթարկվել է հարկադիր սեռական հարաբերությունների մանուկ հասակում:

Կոնֆլիկտածին գործոնների ընտրությունը և դրանց ազդեցությունը ընտանիք հոգեբանական մթնոլորտի վրա տարբեր ժամանակներում եղել են և մնում են հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Կոնֆլիկտածին գործոնների դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները բազմազան են հոգեբանության ոլորտում:

Գլխավոր հարց է դառնում, ինչպես ապահովել հոգեբանական մթնոլորտ ընտանիքներում, ինչպիսի մոտիվացիոն գործոնների փաթեթ մշակել տվյալ ընտանիքների անդամների համար:

Այսպիսով ընդհանրացնելով վերը շարադրվածը հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի բարենպաստ զարգացման համար կարևորագույն նախադրյալներից են հանդիսանում բարենպաստ ընտանիքը, հատկապես հուզական կապը մոր հետ, որի հետևանքով երեխայի մոտ ձևավորվում է հասարակությանը և բարոյականությանը համարժեք կայուն արժեքային համակարգ:

2. Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:

3. Դաստիարակության և ուսուցման գործընթացում մեծ ազդեցություն ունի ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարքը, կենցաղային պայմանները և հատկապես հասարակությունում անձանց փոխհարաբերությունները

4. Գրականությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մայրական սիրուց և հոգատարությունից զրկված երխաները թերզարգացած են էմոցիոնալ, ֆիզիկական և ինտելեկտուալ առումներով: Ուսումնասիրելով որոշ հետազոտություններ պարզվեց նաև, որ ծնվելու օրվանից կոնֆլիկտային

ընտանիքում մեծացած երեխաները հետագայում լինում են թերզարգացած, չեն դրսևորում ուսման նկատմամբ դրական վերաբերմունք: Պատճառն այն է, որ նրանք զրկվում են ամենակարևորից՝ ընտանիքի ադամների կոմից սիրված լինելուց:

5. Երեխաների նդեռահասների դաստիարակության և ուսուցման նկատմաբ հետաքրքրություն և նպատակային վարք դրսևորելու համար մեծ ներուժ և հատուկ գործիքակազմ պետք է կիրառեն մանկավարժները ուսուցումը առավել հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար: Համակարգային փոփոխություններ իրականացնելու և ձևավորման համար նպատակահարմար է հաստատություններում ընդգրկել հոգեբաններ, որոնք նման երեխաներին կօգնեն ձեռք բերել այնպիսի արժեքներ, որոնց օգնությամբ ծնողական խնամքից զուրկ երեխաները իրենց կզգան հասարակության լիաժեք անդամ:

6. Անբարենպաստ ընտանիքներում մեծացած երեխաների մոտ ներանձնային հուզակամային ոլորտը բարձր է, իսկ բարենպաստ ընտանիքների երեխաների մոտ բարձր է ներանձնային կոնֆլիկտը: Եվ առհասարակ երկուսի դեպքում էլ ներքին գործոններն նույնն են:

Գրականության ցանկ

1. Արդյունավետ սոցիալական աշխատանք£ Ձեռնարկ սոցիալական ծառայությունների աշխատողների համար, Եր.,1996£

2. Արզումանյան Ս., Հոգեբանություն: - Եր., Զանգակ - 97, 2003 - 176 էջ:

3. Արզումանյան Ս., Իրավաբանական հոգեբանություն, Եր., Զանգակ - 97, 2004 – 432 էջ:

4. Բազեյան Կ., Գենդերային հետազոտություններ: Գենդերի էթնոմշակութային առումները, Եր., Ասողիկ, 2002 – 86 էջ:

5. Գասպարյան Յու.Ա., Ավանդական ընտանիքն ժամանակակից Հայաստանում, Եր., Ասողիկ, 2002 – 58 էջ:

6. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, Եր., Ակունք 2001 – 116 էջ:

7. Թադևոսյան Գ. Մ., Հայ ընտանիքը սոցիալական փոփոխությունների արդի փուլում, Եր., 1999:1.Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003, с.- 224.

8. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008, с. – 412.

9. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002, с. – 212.